

Ա. ՆՈԼԻԿԻՐԵՎԸ. — POÈMES D'ORIENT
(Les Sultanades, Le Soleil d'Automne. Trois Poèmes. Poèmes en Prose Cadencée). Jouve et Cie.
Editeurs, Paris.

Փուլ և ընկ. հրատարակիչները, Փարիզ, հատորի մը միացնելով բանաստեղծ Ա. Նաւարեանի նախապէս առանձին հատորներով երեցած թիրթուածներու երեր շարքերը, ճշխացուած ու սրագրուած՝ **Արեւելյան Քերոսւածներ** (Poèmes d'Orient) անունին տակ կրկին հրատարակ հանած են:

Ա. Նաւարեան անձանօթ մը չէ մեզ համար. դրանսա, Սորպանի մէջ ուսած ֆրանսերէն լիզուն եւ զրականութիւնը, եւ զանոնք իւրացուցած մայրենի լիզուի եւ տոհմային զրականութեան չափ՝ ուսուցչական զորդունէութեամբ ապրած է ատեն մը նուսանայոց եւ ապա Պուսոյ մէջ եւ շրջակաները:

Ինձի համար, սակայն, բանասանդ Նաւարեանը զերազանցապէս համելի եւ անակնկալ յայտնութիւնը մը եղաւ. ես զինքը կը ժանչնայի ֆրանսական լիզուի ուսուցիչ մը, բայց ֆրանսերէնի ուսուցչի մը եւ ֆրանսերէն լիզուով թիրթուածներ զըրող հիդինակի մը միշեւ լայն ու խոր անցրաց մը տիսնել բնական է քիչ մը շատերու համար. եւ հիմա, այդ յայտնութենէն վերջը, իր բանաստեղծական նուրբ արուեստին մեծ ու իրական արժէրին մասին այնքան ծեռնհան եւ նեղինակաւոր գնահատութիւններու դիմաց, վարանում մը ունիմ զնահատութեան եւ զատաստանի ուեէ խօսք ընկու իր զործին համար Բայց այդ զործ զատելու եւ հշուելու վարանում արժէրին մասին այն այն հպարտութիւնը զոր ունեցած արժանաւոր ազգակցի մը, ֆրանսական խստապահնջ ու դժուարանամ բնադատութեան առջեւ, բաց ու դափնինապակ ճակասում մը զուրս զալու կազդուրի իրողութիւնը անսնելով:

Ակիզբէն մինչեւ վերջը կարդացի Ա. Նաւարեանի թիրթուածներու այդ հատորը զրանաշակ աննման հանոյրով մը, ուր ֆրանսական այնրան զունեց եւ այնքան պայծառ ու երածշտական լիզուն երեւան կուզայ իր բառերու թարուն յորդութեամբը, իր բժականական նրբին նշդութեամբը եւ իր տաղաչափական թերթիների բոլոր բարդ կառուցուցածրովը, նման ֆրանսական սունաւորին մեծ վարպետներու զրին նարաւար արդիւնքներուն. այնչափ որ, եթէ նեղինակը ուզէր իր սուրուարութիւնը ձածկել, զբժուարա պիտի կրնայինը վերագրել զանոնք օստարի մը ստեղծագործութեան. Բայց բաներ մը կան որ պիտի մատնէին զայն, եւ այն է իր ներշնչումներու մօդիւը եւ աղբիւը, արեւելյան գառ ու բոցեր երեւակայութեան մը փթիւմը. փափուկ զերզայութիւնը, եւ իր պատկերներու այն տեսակ մը հմայըն ու կախարդանը զոր Արեւելյան նոգին միայն զիտէ ստեղծել:

Գ. Նաւարեան իր ոյդ թիրթուածներով ֆրանսերէն զրականութեան մէջ կը զնէ. Արեւելյան լոյսերէն պայծառ շողեր, մւայլ, սակայն անխոսով համակերպութիւնը ճակասազրի անողոր հարուածներուն առջեւ, մարդկային նոգին խորովումը՝ որ կ'այ-

րի բայց չի սպառիր: Մէկ խօսքով Արեւելյան տարատամ խորհրդաւորութիւնը. իր անմրտանելի ահաւոր պատկերներովը եւ նոյն ատեն իր կախարդող տեսիլներովը:

Ա. Նաւարեան ասովի իսկ իրեն կ'ապահովէ բանասեղծի արժանիքը միշազգային հրատարակին վրայ եւ ցոյց կրւայ հայ մոտքին մշակութային մեծ ընդունակութիւնը, արժանի ամէն զնահատանրի որ պատուարի վկայութիւն մըն է մեր ցեղին ազնուական խառնուածքին:

Գ. ՄԻԱԱՆ

ՔԱՂԱՔԱՅՑԱՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Գեց Յակով Արքոնիան (Ազգայինի). 1931. Տպա-«ԱՐԵՎԵԼՅԱ»: Սեւանիկ. Էջ՝ Բ+238 զին՝ 35 տակամի, 11.5 դրւ:

Օգտակար զասագիրը մը: Նապատակն է՝ ազգային վարժարաններու մէջ բաղադրացիական կըրթութեան նիւրութիւնը մշակելու կամ մշակել ուղղուներու դիւրութիւնը մը ընծեռել՝ ծեռնարկի ծեւին տակի կարելի չէ: արդարեւ ուրանալ պէտքը բաղադրացիական կրթութեան՝ որ աշակերտին այլեւայլ նիւրերու մէջ իւրացուցած ծանօթութիւնները ներդաշնակ միութեան մը կը գերածէ: կեանքի մէջ կիրարիուելու համար: եւ այս զիրքը՝ կը կարծենք թէ յաջող բայլ մըն է՝ առնուած դէպի լրացումն այդ պէտքին:

Բաժնուած է Ա-ԼԵ. 35 զլուխներու, կ'երեւի թէ եօթնեակը մէկ դասի հաշուուվ: Կը շօշափէ բբնականարար ընկերային խողիները, կը խօսի ընտանիքի, հայրենիքի, զպրոցի եւ զասատիարակութեան, ընդհ. եկեղեցւոյ եւ Հայ եկեղեցիի մասին, հանրային առողջութեան, ոստիկանութեան, կառավարական դրութեանց, միշազգային օրէնքի, Ազգային Սահմանադրութեան, եւայլն, եւ վերջապէս երեւանի Հայկ. Հանրապետութեան վրայ:

Այս բոլոր մեծ եւ ընդարձակ խնդիրներու շուրջ՝ ընդհանրապէս ընդունուած զաղափարները որոշ, մշզրիտ, ամփոփ եւ զիւրահասկնակի կերպով ներկայացնելու մէջ՝ յայնին է որ յաջողած է Տիար Ալոննեան:

Իրաւ է թէ շատ մը կարեւոր խնդիրներու կամ բառերու վրային հագեւանցի կերպով մը միայն անցուած է, զիրքը չափէն աւելի ընդլայնելու մուադրութեամբ. անշուշտ, եւ աշակերտին մէջ ալ պատմական եւ ուրեմ ծանօթութիւններ ներադրելով: Այսրան սեղմ ծեռնարկի մը մէջ՝ որ մէկ տարւոյ շշան մը միայն կ'ընդգրկէ՝ թերեւ ասկէ աւելին ալ կարելի չէր ընծի: Բաց աստի՛ ուսուցչին կ'իյնչ զար տուած ատեն կարգ մը կէտեր լուսարաննեւ:

Ամէն զլուխի վերջը կայ իւրաբանչիւր դասին ամփոփուրը եւ հարցարան մը, որոնք կը դիւրացնն թէ՝ աշակերտին եւ թէ ուսուցչին զործը:

Տիար Գօդոս Էսմիրեանի ծախրով հրատարակուած է «Քաղաքացիական Կրթութիւն» ը. Հայ պատանեկութիւնը չորհնակարութիւնը կը պարագ մեկնասին եւ նեղինակին միանգամացն:

Տ. Ա. Դ.

ՄԵՐ «ԱՐԱՐԱՏԻ ՕՐ» ՀԵՐԲ. Ե. Յ. Հրաչյան,
Տպ. Ե. Տօնիկեան, Գևորգ, 1930, եւե 34, Դիմ,
20 Սիւրբական դատիկան:

Բարոյալից զաւշտ մը, 2 արարով, արուեստը
սիրողի մը կողմէ գրուած: Ահաւասիկ խաղը իր ամ-
րողջութեան մէջ, վեց երիտասարդ ամաթիօրներ՝
աստամարոյժ, զերասան, եւլյու: Պարտատէր դե-
րասանին ծննդեան օրն է: Ուրիշին հասցէին եկած
դրամը խրացնելով պատրաստուած սեղան մը: Շա-
զակրասութիւններ, բանզէափ հովեր, փորձեր ա-
մէնքէն: Պահանջկոտ ներկայութիւնը նպարավաճա-
ռին: Նամակի խարդախուելուն յայտնուիլը, նամա-
կադիրոց զայրոյթը, կազ ու կուի, զերասանը իր
փոխառուի զգեստներէն մերկացած:

Զաւեշտին մէջ հանդիսականները խնդացնելով
իր թելազրուի սա բարոյական դասը՝ թէ երիտա-
սարդի մը համար արուեստի մը սէրբ բաւական չէ,
պէտք է ունենալ զործնական զրազում մը:

Ցանձնաբարի անոնց համար՝ որոնք կը նախ-
ընտրեն արական սեռէ: զերկատարներ ունեցող
զաւշտներ:

Ե. Ա.

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ

Ն. Ա. Բ. ՖԱԼՅԵԻ ԳՐԱՍՏԱՆԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Անզինոյ Վեհափառ ձօրձ Ե. Քաջալուրին Քրոջ՝
նորին Արայական Բարձրապատութիւն **ՖԱԼՅԵԻ**
ԿՐԱՍՏԱՆԻՒՆ, մահուան առթիւ Ա. Աթուէս ուղ-
ղուած ցաւակցական հեռազրին ի պատասխան ստա-
ցուած է հահեւեալ պաշտօնազիբը: —

(Քարզմանութիւն)

ՊԱՂԵՍՏԻՆ ԲԱՐՁՐ ԳՈՄԻՄԱԿՐՈՒԹԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆ

ԵՐՈՒԱՆԱԴԵՄ

Ն. Ա. Բ. ՖԱԼՅԵԻ

17 Փետրուար 1931

2երդ Մրրազնութիւն:

Բարձր կոմիսէրը յանձնաբարած է ինձ տեղե-
կացընել 2եզ, թէ նորին Արայական Բարձրութիւն
իշխանութին մահուան առթիւ Կենտրոնական Ար-
եականական միջոցաւ 2եր կողմանէ Վեհափառ
Քաջալուրին յդուած ցաւակցական ուղերձը մամա-
նակին ներկայացուած է նորին Վեհափառութեան:

Նորին Վեհափառութիւնը հրամայած է Գաղ-
թային նախարարին, որ խնդրէ Ն. Վ. Բարձր Գո-
միսէրէն 2եզ յայտնել նորին Վեհափառութեան ըը-
նորհակալութիւնները 2եր ուղերձին համար:

Մնամ 2եր Մրրազնութեան
Հնազանդ ծառան
(Առուազրութիւն)
Մ. Նիկողոս
Վասն Գիւանապետի

Գերաշնորհ

Տ. ՄԵԽՈՊԴ Ա. ԵՊՍ. ՆՃԱՆԵԱՆ
Տեղապահ
Պատրիարքարան Հայոց
ԵՐՈՒԱՆԱԴԵՄ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ,

Նիս ԺԶ. (Մարտ 5)

Նախագահնութեամբ Տեղապահ Մրբ. Հօր

ՕՐԱԿԱՐԳ. — Վարչական եւ Հաշուական հա-
մարտասութիւն Տնօրէն Ժողովոյ՝ 1929 Մյու. — 1930
Ապր. 30 Տարեշրջանի:

ՔԵՐԱԳԸ. — 1. Միաբ. Ընդհ. Ժողովի երկու Ա-
ստենադպրիներուն բացակայութեան հետ եւանդրով բաց
մնացած պաշտօններու համար Աստենադպրիներու^{նոր} ընտրութիւն: Ա. Աստենադպրի ընտրուեցաւ: Հոգ.
Տ. Շաւարչ Վրզ. Գույումմենան, Բ. Աստենադպրի՝
Հոգ. Տ. Գեղամ Վրզ. Քամեան:

2. Տնօրէն Ժողովոյ կողմէն 1929-30 տարոյ
վարչական համարտասութեան ներկայացումը եւ
անոր ունենդրութիւնը:

3. Տնօրէն Ժողովոյ կողմէն 1929-30 տարոյ
հաշուական համարտասութեան ներկայացումն եւ
ունենդրութիւնը: Հաշուեցոյցը յդուեցաւ արդէն նա-
խապէս որոշուած եւ ընտրուած «Հաշուեցոյցի ըքն-
նիչ» Մասնաժողովին ի բնուածիւն եւ ի տեղեկա-
զրութիւն:

4. Հաշուեցոյցի Քննիչ Մասնաժողովին պակասծ
մէկ անդամին տեղ՝ նորի մը ընտրութիւն՝ յանձնին
Հոգ. Տ. Մերուբէ Վրզ. Մանուկեանի:

Նիս ԺԷ. Եւ ԺԸ. (Մարտ 10 եւ 12)

Նախագահնութեամբ Տեղապահ Մրբ. Հօր

ՕՐԱԿԱՐԳ. — Անցեալ ժողովներու ատենազրու-
թեանց ընթերցում եւ վաւերացում:

ՔԵՐԱԳԸ. — Կարգացուեցան Ե - ԺԴ նիստերու
ատենազրութիւնները եւ վաւերացուեցան:

931/5/12

Դիմում
ՄԻԱԲ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ